

5969

3231(47)

4-22

P/M.C/m  
1906

### **З № 7500000000000000000 № 3**

523·1(436·1)

4-2

Կ. ԿԱՌԵՑԿԻ

# ԱՐՄԵՆԻԱՆԻ ՃԳՆԱՊԱՄԾ

(Lb20h bh U.29)

Թուսերէնից թարգ.

$U, U_*$

## Յանելուած

2010

P. B. S. L. P. U.

ԵՂԵՐՄԵԿԱՐԾ ՏԱՐԱՎՈՒ ՇՀԵՐԱՎԻՇԱ ԸՆԿ. Մադարեան փող. № 5.  
1906 (160)

323.1(47)

4-22

Կ. ԿԱՂԻՑԿԻ

w

# ԱԽՈՏՐԻԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ

(Lb20h th U29)

3021

~~1000~~

Առասերէնից թարգ. Ո. Ո.

## Յանելուած՝



Թ Ի Ֆ Լ Ի Ս  
ՀԵՐՄՈՒՆ ԸՆկ. Մաղարեան փող. № 5.  
1906 (160)

6729 ս.հ

Дозволено цензурою Тифлисъ, 14 Апрѣля 1906 года.

## ԱԽՍՏՐԻԱՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ.

Կ. Կառուցկի.

ԼԵԶՈՒ ԵՒ ԱԶԳ:

Անկարելի է հասկանալ Աւստրիայի դրութիւնը, չը պարզելով նրա ազգային պրօբլեմը: Բայց դա ամենաին հեշտ գործ չէ: Մշտական շարժման մէջ փոփոխող հասարակական երևոյթները, որոնք առաջանում են մարդկային փոփոխող բարդ օրդանիզմների փոխադարձ ներգործութիւնից, աւելի դժւար է արտայայտել հասկացողութիւնների մէջ, քան բնութեան երևոյթները:

Մենք այդ ընդգծեցինք, օրինակ, մեր դրեզզենի քեզոլիւցիան կազմելիս, երբ հարկաւոր էր որոշել բերկիոնիզմի հասկացողութիւնը: Այն մարդկիկ, որոնք չեն կամենում հասկանալ, երբէք չի կարելի նրանց բաւարարող որոշում տալ սօցիալական երևոյթի մասին: Վերցնենք, օրինակ, երկու բնորոշ երևոյթներ, կապիտալիստին և պրոլետարին: Եթէ մենք վերջինին ներկայացնենք ինչպէս չունեոր, որը ապրում է իր բանւորական ոյժի վաճառումով, այսինքը, որը կարիքեց հարկազրւած վաճառում է իր բանւորական ոյժը և այն էլ այնպիսի գնով, որը շահ է բերում գնողին, իսկ արդիւնաբերող կապիտալիստին—ինչպէս փողատէր, որը ապրում է ի շնորհի պրօլետարի, այսինքը որը շնորհիւ իր փողերի և բանւորական ոյժի ներկայութեան, կարողանում է գնել և օգտաւէտ կերպով գործադրել այդ ոյժը, այդպիսով շահագործել նրան, բուրժուատնուեսագէտը թերկս առարկի մեզ. դա—անհեթեթու-

թիւն է: Բազմաթիւ վարձկան բանւորներ կան, որոնք ինայողական դրամարկղի տեսրեր, ակցիաներ կամ պետական թղթեր ունեն—ուրեմն դրանք կապիտալիստներ են, սակայն կան նոյնպէս շատ կապիտալիստներ, որոնք աշխատում են իրենց ձեռնարկութիւնների մէջ—ուրեմն դրանք բանւորներ են: Այդպիսով այդ որոշումը անյաջող է, կապիտալիստների ու պրօլետարների և նըրանց շահերի մէջ խիստ տարրերութիւններ գոյութիւն չունեն: Միայն դրդողներն և խոռվարաններն են արհեստական միջոցով հակասութիւններ առաջացնում նրանց յարաբերութիւնների մէջ:

Այդ մեթօդով պատճառաբանողները նրանք են, որոնք յայտնում են, որ բեւկղօնիզմի և ոչ լիւկղօնիզմի բաժանումը արհեստական է և ոչ այլ ինչ, բայց եթէ աննշան տարածայնութիւնների գիտաւորեալ ուռուցում մի քանի խոռվարանների և վիճաբանողների կողմից: Եւ այնուամենայնիւ, մենք հանդիպում ենք ամեն օր կապիտալիստների և պրօլետարների, բեւկղօնիստների և հակարեւիզիօնիստների և ոչ-երկդիմի կերպով զգում նրանց հակաբրութիւնը:

Ազգութիւնը նոյնպէս գժւար է որոշել, ինչպէս և բեւկղօնիզմը, սակայն նրա որոշումները հեշտութեամբ են ընդունում, որովհետեւ ոչ ոք նրա գոյութեան բացաման մէջ շահագրգուած չէ:

Ազգութեան գլխաւոր յատկանիշը մեզ թւում է լինուն, այդ իւրաքանչիւր հասարակական, միահամուռ գործունէութեան, հետեապէս, իրա հասարակութեան նախապայմանը: Լեզուն արդիւնագործութեան նշանաւոր միջոցներից մէկն է, ոչ միայն գաղափարների մտաւոր արտադրութեան կողմից, որոնք կարող են մտածել և հաղորդւել միայն խօսքերով և, միայն այդպիսով, դառնալ հասարակական սեփականութիւն, այլ նոյնպէս և նիւթական հասարակական արտադրութեան

միջոց, որը առանց արտադրողների փոխադարձաբար միմեանց հասկանալուն անկարելի է:

Բայց լեզուն մի միջոց է ինչպէս մարդկանց միացման, նոյնպէս և նրանց բաժանման: Մենք դեռ չեմ գիտենք լեզուի ծագումը և այն օրէնքները, որոնցով նա առաջնորդուում է վերջին ինստանցիայում: Սակայն մենք գիտենք, որ նրա կազմաւորելը խիստ կախւած է օրէնքներից և որ միատեսակ կազմակերպւած մարդկիկ, համանման պայմաններում, պէտք է զարգացնեն միատեսակ լեզու: Այսպէս, լեզուն մի միջոց է հասարակական հասկացման և հասարակական կապակցութեան, որը հեռու է գնում նախնական հօար շրջանից, կապւած մնունք հայթայթելու և ընդհանուր թշնամիների դէմ կոփւ մղելու միութեամբ: Միւս կողմից, բասսաներից տարբերութիւններից և նրանց կենսական պայմաններից բղխող լեզուի տարբերութիւնը մի միջոց է դառնում՝ բաժանելու ամբողջ մարդկային ցեղը առանձին ստորաբաժանումների, ինչ բացակայում է կենսանիների աշխարհում: Միւնոյն լեզու իմացուը բարեկամ է գառնում, չիմացողը—օտար, որի դէմ, նայած հանգամանքներին, կամ սառնասրութիւն են զգում, կամ ծաղր, կամ արհամարանք, կամ ատելութիւն: Բոլորը, ինչ հասարակական է, մօտեցնում է մարդկաց, ներգործում է նրանց լեզուների ասսիմիլացիային—ձուլման, եթէ միայն նրանք հենց սկըզբից միանման չեն: Լեզուի ամեն մի նմանութիւնը նորբերից մի միջոց է դառնում աւելի ևս հասարակականութէն շաղկապելու մարդկանց: Այսպէս, միենոյն լեզուվ խօսող մարդիկ գառնում են միւնոյն հասարակական օրգանիզմի—անդիք անդամները:

Սօցիալական միութեան հետագայ միջոցը—լեզով պայմանաւորւած տրադիցիան է: Մինչեւ լեզուի կազմաւորելը, անհատի հետ միասին անօգուտ կորչում է և նրա փորձառութիւնը: Բացի անձնական փորձա-

առութիւնից այն ժամանակ այլ փորձառութիւն գոյութիւն չունէր: Իսկ լեզուն հնարաւորութիւն է տալիս անձնական փորձառութիւնները յայտնել ուրիշներին, դարձնել նրանց անհատականից հասարակական. Նա թոյլ է տալիս հասարակական դարձած փորձառութիւնները հաղորդել հետագայ սերունդներին: Հասարակական փորձառութիւնների գումարումը տալիս է ոչ միայն տեխնիքական, սրա հետ միասին և սօցիալական պրօգրեսսի հիմնական պայմանը, այլ և հնարաւորութիւն է տալիս պահպանելու ապագայ սերունդների մէջ յիշողութիւն զանազան հասարակական օրգանիզմների ընդհանուր ուրախութիւնների և տիրութիւնների մասին, ամրացնելու, ազգային արագիցայի միջոցով, ներկայիս յարաբերութիւններով պայմանաւորւած ազգային կապը:

Այդպիսով, լեզուն դառնում է ազգութեան կարևորագոյն հիմնական պայմաններից մէկը:

Բայց նա միակը չէ: Լեզուն միանում են և ուրիշ պայմաններ, որոնք այնքան կարեոր կարող են լինել, որ կատարելապէս նրանք բաւական են ազգութիւնը պահպանելու համար, նոյն իսկ այն գէպքում, եթէ վերջինը անբարեյաջող պայմանների ներբոյ զըրկւի իր լեզուից, ինչպէս օրինակ, այդ եղաւ իրանդացիների հետ: Սակայն դա բացառութիւն է: Առանց առանձին լեզուի, չի կարող կազմել առանձին ազգ, ինչպէս և, սովորաբար, նա չի կարող իր գոյութիւնը պահպանել:

Բայց լեզուն անհատի վերաբերեալ խիստ անորոշ յատկանիշ է, որպէսզի կարելի լինի լեզուի ընդհանութեան վրայ մի որևէ է տեղ ամուր հասարակական օրգանիզմ կառուցել: Կարելի է իրացնել օտար լեզուն, սեփականը մուանալ, կամ տիրապետել մի քանի լեզուների միանգամից—այդ բոլորը չափազանց խառնութ հիմունք են հասարակական օրգանիզմի համար:

Վերջինը միշտ առաջացել է այլ ֆակտօրների պայմանների ազգեցութեան տակ, իսկ լեզուն միշտ ձգում է ցոյց տւել յարմարւելու տւած հասարակական օրգանիզմին, այնպէս որ լեզուի ընդհանութիւնը և հասարակական միութիւնը քիչ թէ շատ միշտ գուզագիրել են:

Առաջին ամուր կապը, որը շաղկապել է կազմակերպել է մարդկային հասարակութիւնը, եղել է արիւնակցութիւնը, մի ընդհանուր նախահայրից առաջանալը: Միայն լեզուի շնորհիւ արիւնակցական կապը կարողացաւ ընդարձակւել անասնական հօտի սահմաններից դուրս: Վերջինը կարող է ընդարձակւել միայն մինչև որոշ սահմանները, որից անցնել նա, յայտնի հանգամանքներում, չի կարող. սերնդի իրաքանչիւր հետագայ աճեցումը պէտք է զատւի, նոր հօտ կազմի և կորցնի իր կապը հարազատ հօտի հետ: Սակայն մարդկային հասարակութեան մէջ լեզուն այն միջոցն է, որով կապ է պահպանում նոր սերնդի և նին ցեղի մէջ, որից նա առաջացել է, ինչպէս և պահպանում է ազգակցութեան, միմիանց պատկանելու զգացմունքը: Այդ պրիմիտիւ աստիճանում, որի վրայ հասարակական օրգանիզմը հանգչում է արիւնակցութեան վրայ, ըասսան և ազգը համարեա զուգագիպում են. ըասսաները ուսումնասիրով մեր ժամանակակից թիորեաիկիները, ամենավատ տեսակի անախարօնիզմի մէջ են ընկանում, երբ ժամանակակից ազգերին գիտում են ըասսայական տեսակէտից:

Այն ինչ, մարդկային հասարակութիւնը շաղկապող նոր կապ յայտնեց՝ որքան մարդիկ աւելի են նստեկեաց գանոնում, այնքան կարեսոր նշանակութիւն էր ստանում նրանց համար նախահայրերից ժառանգած ընդհանուր աերբիտօրեան:

Այնտեղ, ուր հասարակութեանը կապում են արիւնակցութեան կապերը, ազգերը կարող են իրենց պահ-

պանել փոխագարձ խառնութիւններից, նոյն իսկ այն-  
տեղ, ուր նրանք ցըւած են անկանոն կերպով, որը յա-  
ճախ նրանց տեղափոխութիւնների հետեանքն էր լինում:  
Այդ աստիճանի վրայ մարդիկ թափառական կեանք են  
վարում, բնակչութիւնը նօսոր է, հասարաւական առան-  
ձին համախմբումները բաժանւած են իրարից մեծ տա-  
րածութիւններով: Այդ զրութեան մէջ հեղտու-  
թեամբ կարողանում են խուսափել փոխագարձ շփուժ-  
ներից, որը արդէն անկարելի է դառնում տեղա-  
կան նստակեցութեան և ազգաբնակութեան աճող խը-  
տութեան ժամանակ: Բայսանները կարող են գեռ ինք-  
նորոյն մնալ, ուրիշ ցեղերի հետ ամուսնական կապերը  
արգելելով, և շնորհիւ կղղիացման այլ իրաւաբանական  
միջոցների, թէպես այդ էլ է հետզետէ գժւարանում,  
որքան աւելի են շատանում զանազան ըասսանների  
պատկանող մարդկանց մէջ շփման կէտեր: Լեզուն պէտք  
է մի լինի ամբողջ տերրիտորիայի համար: Լեզու առ-  
սիմիլեացիան բոլորից դանդաղ է կատարում այնտեղ,  
ուր երկու րասսանները հակադրում են իրարու, ինչ-  
պէս գերիշխող և ենթարկվող: Սակայն այդտեղ էլ  
վերջնվերջոյ, հասարակական պահանջները ստիպողա-  
բար առաջ են տանում լեզուների ասսիմիլեացիան:  
Խլ-րդ գարում, երբ նօրմանները նւաճեցին Անգլիան,  
նրանք ֆրանսներէն էին խօսում: Ամբողջ երկու դար  
այդ լեզուն մնաց պալատի արիստօկրատիայի լեզու:  
Յետոյ նա լուծւեց անգլօսականնական լեզու մէջ: Ֆրան-  
սիայում գերմանական լեզուն դարձաւ արիստօկրատի-  
այի և պալատականների լեզու, իսկ ուժանականը ժո-  
ղովրդի լեզու: Այդ տեսք հինգ դար, և վերջապէս, Խ-րդ  
գարում գերմանական լեզուն վերացաւ ամբողջ ֆրան-  
սիական պետութեան մէջ, գերիշխող րասսան ենթարկ-  
ւածի հետ միասին ձուլւեց մի ազգութեան մէջ, գոնէ  
լեզուի կողմից: Աւելի ուշ, ինչպէս յայտնի է, կատար-  
ւեց ընդհակառակը. ֆրանսիական լեզուն գերմանիա-

յում դարձաւ պալատականների և արիստօկրատների  
լեզու, սակայն դա կարելի էր միայն ազգի խիստ կող-  
տացման և յաջորդական անկման ժամանակի:  
Որչափ զարգանում է քաղաքացիական հասարա-  
կութիւնը, դրա հետ միասին՝ և հասարակական կա-  
պերը, այնքան աւելի ոյժեղ կերպով է արտայայտում  
մի լեզուի իւրացման տեսնգեցիան, միևնույն տերրիտո-  
րիայի վրայ ապրող մարդկանց համար: Կապիտալիս-  
տական արդիւնագործութեան միջոցը առաջ է բերում  
մինոր տեսնգեցիա և՛ ապահովել ազգային պետութեան  
մէջ ազգային տերրիտորիան: Կապիտալիզմը կարիք  
ունի ներքին շուկայի լայնացման և կատարեալ ազատ  
հաղորդակցութեան մէջ, սակայն նրան նոյնպէս ան-  
հրաժեշտ է ըստ կարելոյն ազատ մուտք ունենալ գէ-  
պի համաշխարհային շուկան, որը աւելի է նրա համար  
ապահուած, որքան աւելի հզօր է այն պետութիւնը,  
որին նա պատկանում է: Իսկ հզօր պետութիւնը, — ազ-  
գային պետութիւնն է, որտեղ հեռացրւած են ազգային  
հակասութիւններից բախող ընդհարութների բոլորը  
ութիւններն էլ նոյնպէս քիչ գժւարութիւնների են  
հանդիպում: Լեզուի զանազանութիւնը քիչ չէ գժւա-  
րացնում մաքսային յարաբերութիւնները: Իւրաքան-  
չիւր ազգի բութուազիա, այդպիսով, շահագրգուած է  
ազգի բոլոր մասերը միաւորելու պետութեան մէջ,  
իսկ միւս կողմից ձգտում ունի իր սեփական ազգա-  
յին լեզուն պետութեան մէջ գտնող միւս ազգերի ը-  
լինքին կապելու: Ուր մի ազգերի մասերը գտնուում են  
իրենց ազգային պետութեան սահմաններից դուրս,  
այնտեղ դրանից բախող վտանգը՝ կորցնել ազգութիւ-  
նը, պէտք էր ազգայնորէն տրամադրէր նոյնպէս և այն  
դասակարգերը, որոնք անտարբեր էին դէպի բութ-  
ուազիայի տնտեսական շահերը և պետական իշխա-  
նութեան բազաքական ինտերեսները:

Մինչուն շահով զեկավարում էին թէ բուրժուացիան և թէ պետական իշխանութիւնը՝ միացեալ ազգային պետութեան ստեղծելու գործի մէջ։ Միջնադարեան պետութիւնը բաղկացած էր մանր տերրիտորիաների համախմբումից, որոնք միացած էին թոյլ կապերով և կառավարում էին կամ դեմոկրատական-դաշնակցական, կամ ֆեոդալական հիմունքներով։ Իրաքանչիւր տերրիտորիայ միացեալ բանակի մէջ ունէր իր գորքի մասը։ Թէ ինչ ազգութիւն էր բնակում այդ տերրիտորիաներից իրաքանչիւրի վրայ — զա պետութեան իշխանաւոր պետի համար կատարելաբէս միենոյն էր։ Ընդհակառակը, կապիտալիզմի զարգացմամբ, պետական կառավարութիւնը անցաւ կենտրոնացած բուրժուազիյի ձեռքը, իսկ պետական պաշտպանութիւնը — կենտրոնացած գորքին։ Այս և այն գէպբում էլ զա լեզվի միութիւն էր պայմանաւորում։

Այստեղ, ինչպէս և շատ միւս կէտերում, բուրժուազիյի և կառավարութեան շահերը ձեռք-ձեռքի էին տւած, ինչ, ի հարկէ, չէր արգելում այն բանին, որպիսի վերջիները, գանեւելով մէծ մասամբ այլասիրած արիստօկրատիայի ձեռքում, ոչ բաւարար կերպով հասկանային շահերի այդ ընդհանրութիւնը։

Սակայն ազգերի զարգացումը Արևմտեան Եւրոպայում այլ ուղիով էր ընթանում, քան Արևելքում։ Արևմտաքում ժամանակակից ազգային պետութիւնների կազմաւորումը կատարեց միայն այն ժամանակ, երբ զբանից շատ առաջ ամրող տնտեսական և քաղաքական զարգացումը առաջացրեց խոշոր ինքնուրոյն ազգերը, որոնք հիմք պէտք է դառնային նրանց կառուցման համար։ Միայն հազուագիւտ գէպերում այդ պետութիւններից մէկի սահմանում կարող է գոյութիւն պահպան օտար աննշան տարրը, որը չի կարող խանգարել պետութիւնների ընդհանրութիւնը, ինչպէս օրինակ Բասքերը Փրանսիական

Պիրինեում, կամ Իտալացիք Նիցցայում, Ֆրանսիացիք Շիւսիային Շլեսիչում։ Ա-Լոտարինգում, Դանիացիք Հիւսիսային Շլեսիչում։ Ա-րևելեան Պրուսիայում լեհերը ապացոյց են ծառայում այն բանի, որ Պրուսիան իր արևելեան մասերով շտ չէ հեռու գնացել ֆեոդալական ժամանակից։

Կապիտալիզմը ներս խուժեց Արևելեան Եւրոպա իր պահանջներով դէպի պետութիւնը և հասարակութիւնը, ի նկատի շառնելով, թէ հասունացել են այդ թիւնը, ի նկատի շառնելով, թէ նամար թէ ոչ։ Նա ենթարկելով նը վերջինները նրա համար թէ ոչ։ Նա ենթարկելով նը վանկուրաց իրեն, կերպարափոխեց նրանց ըստ իր ցանկութեան, ի դժգոհութիւն բոլոր էւօլիցիօնիստ թեօրիթեան, ի դժգոհութիւն բոլոր էւօլիցիօնիստ թեօրիթիկների։ Ոչինչ չը կայ աւելի յեղափոխական, քան տիկների։ Ոչինչ չը կապիտալիստական արտադրութեան միջոցները, ոչինչ կապիտալիստական արտադրութեան միջոցնախան ինչպէս չի կարող այնպիսի թուիչներով զարգանալ, ինչպէս այդ միջոցները, որոնք դանդաղ յառաջադիմով ընթացք այդ միջոցների, որոնք դանդաղ յառաջադիմով ընթացք գիտեն, խարխափելով, քայլ առ քայլ, միենոյն ընթափով ընթացող շարժում չեն ձանաշում, ինչ բուրժուազիութիւնում է հասարակական զարգացմանը միակ հասարաւոր միջոց։ Հետակապիտական գրադարանը միակ հասարաւոր միջոց։ Հետակապիտալիզմը մուտք է գործում ամենահեռաւոր անտակապիտալիզմը մուտք է գործում ամենահեռաւոր անտակապիտալիզմը, Աֆրիկայի կամ Զինաստանի սիրտը, և պատճերը, Այստեղ հարևանութեանու առաջ է մզում նրանց արտադրութեան միջոցների ամենասախնական շրջանից դէպի ժամանակակից խոշոր ինդուստրիան։ Կապիտալիզմը ժամանակակից պաշտպան է միայն դանդաղ, աննկատելի էւօլիցիայի պաշտպան է միայն թեօրիայում, երբ խօսքը բանւորների պահանջների մասին է լինում։ Սակայն պրակտիկայում — գործնականում, անսպասելիութիւնը, որը նթացութիւնը և վըձկանութիւնը, որով կապիտալիզմը առաջ է զալիս իր տիրապետութեան շրջանսերը ընդլայնացնելու և իր սեփական պահանջները բաւարարացնելու, այդ իր սեփական պահանջները բաւարարացնելու բոլորը ցոյց է տալիս նրա յեղափոխական ընաւորութիւնը։

Կապիտալիզմը հասարակական ձև է, հիմնւած սուր հակասութիւնների վրայ, և այն սօցիալական պրօդրեսը, որ նա բերում է իր հետ, կապւած է միշտ տանջանքի, տառապանքի և կուփ հետ, որոնք աւելի սոսկալի և անողորժ են գառնում, որքան աւելի անմիջնորդականօրէն է յայտնւում արդիւնագործութեան նոր միջոցը: Վերջինս միշտ աւելի արագ և թոփչքներով է զարգացնում իր պահանջները. իսկ զգալի դանդաղ կերպով է նա թոյլ տալիս նրանց բաւարարութիւն տալու միջոցների զարգացումը:

Այդ ցոյց է տալիս, օրինակ, միլիտարիզմը, որը զարգանում է կապիտալիզմի, նրա տեխնիկայի և նրա ազգային մեծ պետութիւնների հետ միասին: Արդէն եւրոպայի արևմտեան պետութիւնների համար նա ծանր բեռ է, որը խանգարում է նրանց զարգացումը: Որ Միացեալ Նահանգները մեզանից առաջ են գնում, դրա պատճառներից մէկը այն է, որ մինչև վերջին ժամանակները այնաեղ բացակայում էր միլիտարիզմը: Այն ինչ, Արևմտեան եւրոպայում նա զարգանում էր ոչ արագ ինգուստրիայից, որը՝ մինչև այժմ դեռ հայթալում էր անհրաժեշտ միջոցներ, որպէս զի դիմանայ նրան և նրանից առաջ եկած պետական պարտքերին:

Կապիտալիզմի հետ միասին երեան եկած արևմտեան մեծ պետութիւնները դրդեցին Արևելեան եւրոպային—Աւստրիային, Ռուսաստանին և Բալկանեան պետութիւններին՝ հաւասարել պատերազմական ոյժի մէջ նրանց հետ: Բայց Արևելեան եւրոպայում, ժամանակակից միլիտարիզմը վաղ առաջացաւ, քան ժամանակակից խոշոր ինգուստրիան: այդ պետութիւնները միջոցներ պէտք է ստանային գիւղացիութիւնից, մասըր և թոյլ զարգացած արդիւնաբերութիւնից, այն ինչ Արևմտեան պետութիւնները—զարգացած և խոշոր ինգուստրիայից: Այդպիսով Արևելեան պետութիւնները քայլքայեցին գիւղացիութեանը, կամ դժւարացրին

արդիւնաբերութեան զարգացումը—երբեմն և այն և միւսը:

Բացի միլիտարիզմից, կապիտալիստական զարգացմամբ կենդանացած Արևելեան եւրոպայի վրայ ազդեցութիւնը նացիօնալիզմը:

## 2. ԱԶԳԱՅԻՆ ՊՐՕԲԼԵՄԸ ԱԿՍՏՐԻԱՅՈՒՄ:

Հետագայում մենք խօսելու ենք միայն Աւստրիայի մասին. սակայն մեր բոլոր ասածը մեծ թէ փոքր չափով նշանակութիւն ունի նոյնպէս և Տաճկաստանի համար:

Երբ կապիտալիզմը ներմուծւեց Աւստրիա վերջինս իրենց գեռ մի միացեալ ազգ չէր ներկայացնում: Տաճկաների դէմ մղած կոփւլ միաւորեց Արևելքի ժողովրդներին: Իսկ երբ 18-րդ դարում վտանգը տաճկեների կողմից անցաւ, Հարստուրգեան միապետութեան համար այլ ևս պատմական ինդիք ասածը գոյութիւն չունենալու մասին: Պետութիւնների զանազան անբաժանելի մասունքը: Պետութիւնների զանազան անբաժանելի մասերին չէր կապում ոչ լեզուն, ոչ տնտեսական շահենը, ոչ նոյն իսկ տրադիցիայի ընդհանրութիւնը: Նըրը, բանք ապրում էին իրար կողքի միայն նրա համար, որ, 18-րդ դարում կազմւած միւս պետութիւնների ունանանուր դինաստիան ընդհանուր բիւրօնման, ընդհանուր զգացմունք: Նոյն նուր լեզու և ոչ ընդհանուր ազգային զգացմունք: Նոյն քարտիայի և զօրքի հետ միասին տիրապետում էր կրատիայի և զօրքի հետ միասին տիրապետում էր նրանց վրայ:

Զանազան մասերի յարաբերութիւնները պետութեան մէջ այնքան աննշան էին, որ նրանք կարող էին ամբողջ դարեր անցկացնել, չառաջացնելով ոչ ընդհանուր լեզու և ոչ ընդհանուր ազգային զգացմունք: Նոյն քերջինիս սաղմը գոյութիւն չունէր, երբ կապիտակալիզմը տիրեց Աւստրիային, արթնացրեց նրա ժողովրդներին և պահանջ առաջացրեց նրանց մէջ զէ-

պի ազգային միութիւնը: Այդ զգացմունքը, որը արևոտաբում այնքան ուժգին կերպով նպաստեց և աջակցեց պետութիւնների կազմակերպման, Աւստրիայուն կարող էր ազգել կազմալուծիչ կերպով, կոր առաջացնելով ազգերի և պետութեան զանազան մասերի մէջ:

Այստեղ այդ հաճգամանքի վրայ ես չեմ ծանրանալու, որովհետև կը կրկնէի միայն այն, ինչ արդէնիսկ արտայայտել եմ («Neue Zeit» XVI, I. «Ազգութիւնների կոիւր և Աւստրիայի պետական իրաւունքը», երեսներ 516, 557 և 727): Այստեղ հարկաւոր է միայն ցոյց տալ մի մօմենտի վրայ, որի վրայ ես այն ժամանակ հարկաւոր ուշագրութիւնը չը դարձրի և որը լարում ու դժւարացնում է ազգային հարցի լուծումը Աւստրիայում (ինչպէս և Տաճկաստանում):

Կերն ես արդէն նկատեցի, որ նստակեցութեան ոկզրնական շրջանում, զանազան բասսաների և ազգութիւնների անդամները յաճախ ապրում են խառը միամանց հետ, և որ երեխն շատ դարեր էին հարկաւոր, որպէսզի մի տերրիտորիայի վրայ առաջ կար միաւորած ազգ, որի մէջ լուծւած լինէին նրա կազմող բոլոր մասերը: Աւստրիան իր շատ մասերով կուլտուրապէս դեռ այնքան հետ է մնացել, որ նոյն իսկ այդ ստադիան անբողջովին չի անցել: Աւստրիայի ազգերը ամենուրեք չեն բնակւում խիստ սահմանաւծ, կապակցւած շրջաններում, այդ յաճախ ներկայացնում են խայտարդէտ խառնուրդ:

Օրինակ կարող են ծառայել Հունգարիայի հարաւային երեք կօմիտեաները: «Temescher կօմիտեանում ազգութիւնները հետևեալ կերպ են բաժանուում Հունգարները ունեն 6 բնակավայր, բումինները 124. կերմանացիք 60, սերբերը 30, սլովակները, բուլղարները 1 և չեխները 1: Torontaler կօմիտեանում 222 համայքից 43 հունգարացիներին է, 34 բումիններինը, 67 գերմանացիներինը, 63 սերբերինը, 5 սլովակներինը, 4

կրօացներինը և 6-ը բուլղարներինը: Bacser կօմիտեան բաղկացած է 38 հունգարական, 45 գերմանական, 30 սերբական, 2 բումինական և 7 սլովակական համայքներից» (Dr. S. Rrado, Das Deutschtum in Ungarn, Berlin 1903, Puttkamer Mühlbrecht, S. 15, 17):

Այդ կերպ է և Մակեդոնիայում: Այնտեղ օրինակ հաշվել են՝

Կառավարչական շրջանները (Սանջակ)	Յունիոն	Բուլղարներ	Մահմետական (Թուրքիան, ալբանները)	Վլուանիներ	Վլուանիներ	Դիլյանիներ
Skopia . . .	5,036	137,184	117,781	9,831	4,208	1,570
Saloniki . .	232,621	91,708	180,735	17,494	1,070	73,455

Եւ ոչ միայն առանձին կառավարչական շրջաններում (սանջակներում), այլ նոյն իսկ և առանձին կայրերում, ազգերը ապրում են իրար հետ խառն, այսպահ օրինակ, skopia շրջանի արևելեան մասը, կումանովոն կազմւած է 87 յոյներից, 21.106 բուլղարներից, 11.885 մահմետականներից, 7.623 սերբերից և 477 գնչուներից (Dr. Gleantzes Nikolaides, Makedonien, Berlin 1903, Calvary և Co S. 25 և 27):

Այդ երկոյթը այն հիմքերից մէկն է, որոնք ամբացնում են Տաճկաստանի դիրքը Մակեդոնիայում: Եթէ բուլղարները, սերբերը և յոյները միանային, նըրանք վաղուց արդէն կը կարողանային սուլթանին նեղ գրութեան մէջ դնել: Սակայն իրավանչիւրը այդ եղանակութիւններից ինքն էր կամենում տիրանալ Մակեդոնիային, և խանգարում են միմիանց այդ գործում, այնպէս որ, երբ բուլղարները ոտի են կանգնում, նրանք իրենց թշնամիների շարքում, բացի տառձիկներից և ալբանցիներից, տեսնում են և յոյներին ու սերբերին:

Այստեղից պարզ է, թէ որքան են գժւարանում ազգային պրօբլեմների լուծումը այդ տեղային ազգութիւնների խայտարկէտութեամբ։ Նրանք դրանով աւելի են լարում, որովհետև խոշոր ազգութիւնների մէջ ապրող և նրանցից ճնշող մանր ազգութիւնների համար է հէնց, որ բորբոքում է սոսկալի կոփւը։

Եւ նշանաւորն այն է, որ Աւստրիայի և Տաճկաստանի տնտեսական զարգացումը չեն նպաստում այն բանին, որպէսզի ապահովեն ազգութիւնները և լուծեն նրանց մէջ միւս մանր ազգութիւնները և, այդպիսով, ստեղծեն ազգ խիստ սահմանած շրջանով, այլ ընդհակառակը նաև աւելի շատ նպաստում է այն բանին, որպէսզի աւելի ևս խճանեն աղդերը իրար հետ և նորից ստեղծւեն նոր մանր ազգութիւններ։

Դա կատարում է ներքին տեղափոխութիւնների միջոցով, որոնց անհրաժեշտորէն առաջցնում է կապիտալիզմը, որը գարձնելով գիւղական անտեսութիւնը աւելի ու աւելի անհամակերպելի ժամանակակից կուլտուրական կեանքին, միաժամանակ, տեղափոխութիւններ կատարելու միջոցները հեշտացնելով, գիւղական ազգաբնակութիւնը աւելի մօտ շփման մէջ է դնում նրա հետ և այդպիսով նրանց մէջ առաջացնում կուլտուրական կեանքի ծարաւ, — հոսանք դէպի քաղաք, գործարան, դէպի ինդուստրիայի կենարունները, և փախուստ գիւղից։ Ազգային պիտութիւնների մէջ այդ ներքին տեղափոխութիւնները երբէք չեն կարող փոփոխութիւններ առաջ բերել ազգային կառուցւածքի մէջ։ Օտարերկրացիների հոսանքը այլ ազգերից կամ ձուլում է, կամ թէ նրանց ազգեցութիւնը, ինչպէս օտար պետութիւնների, զսպում է։ Այլ բան է ազգութիւնների պետութեան մէջ։ Այստեղ ներքին տեղափոխութիւնները առաջացնում են մշտական դասաւորումներ և ազգերի նոր համախմբումներ, դրա հետ

նիստին անընդհատ շատանում է նրանց խառնուրդը և ընդարձակաւում նրանց ընդհարումների շրջանը։


Ինչպէս փաստ կարող են ծառայել մի քանի հունգարական թւեր։ Առանձին բնակավայրերի ազգային կազմի մէջ վերջին 6 տարում կատարւեցին հետեւալ փոփոխութիւնները։ Զերք էր բերւած և կորցրւած էր՝

Չեռք են բերել	Կորցրել են
Մաջառները	261
Բումինները	162
Գերմանացիները	168
Աերլերը	8
Սլովակները	253

և այլն։

Այդ թւերը պէտք է ցոյց տան միայն խոշոր տեղերի աջգերի խառնակ դրութիւնը և ոչ թէ նրանց զարգացումը կամ յետամացութիւնը։ Օրինակ, մաջառների կորցրած տեղերը չեն նշանակում կորուստ մարդկանց մէջ։ Դրանք տեղի ունեցան հէնց այն պատճառով, որ Մաջառները, ինչպէս տնտեսապէս աւելի յառաջադէմ ազգի ներկայացուցիչներ Հունգարիայում (գերմանացիների շարքում), աւելի են ձգտում գիւղերից և փոքրիկ քաղաքներից դէպի խոշոր քաղաքները, ուր նրանք բուրժուազիայի աւելի ու աւելի մեծ մասն են կազմում ի հաշիւ գերմանացիների։ Բուրժուազիան Հունգարիայում հետզհետէ մաջառանում է, մասսամբ այն պատճառով, որ տիրապետող ազգը մինավաճառում է բոլոր պաշտօնները, տնտեսական կեանքում հովանաւորում է իր ցեղակիցներին, մասսամբ էլ այն պատճառով, որ բուրժուազիայի մէջ մտնող ուրիշ ազգերի բոլոր էլեմենտները յարում են դէպի տիրապետող ազգը, որպէս զի օգտական նրա օգուտներով։

Մաջառների գաղում են Հունգարիայի ազգաբնակութիւնը։ Զը նայած այն բանին,



որ բոլոր միջոցներով աշխատում են նպաստել մաջառացման, 1900-ի ժողովրդագրութեան ժամանակ,—19. 300.000 ընդհանուր ազգաբնակութեան թւի մէջ, մաջառները կազմում էին միայն 8.700.000: Իսկ Հունգարական բարձրագոյն ուսումնարանների ուսանողներից 1900-թին իրանց մաջառ էին համարում 8070 հոգի, գերմանացի 562, ոլովակ 152, բումին 871, սերբ 31 (Rado a. a. D., S. 51): Այդպիսով, Մաջառները կազմում են ազգաբնակութեան  $45\%$ -ը և ուսանողութեան  $83\%$ -ը, Նրանց շարքում հաշվի են առնում միայն գերմանացիք (նրանք կազմում են ազգաբնակելութեան  $11\%$ -ը և ուսանողութեան  $6\%$ -ը):

Այդպիսով ոչ-մաջառ ազգերի համար Հունգարիայում, մաջառ և բուրժուա հասկացողութիւնը նոյնքան համանիշ է, ինչպէս մի բանի տասնեակ տարիներ առաջ պետութեան արևմտեան մասում (Աւստրիայում) գերմանացին ոչ-գերմանացի ազգութիւնների համար բուրժուա էր:

Ի հարկէ, այդ դեռ չի նշանակում, թէ մաջառները պրօլետարիատ չունեն: Ընդհակառակը, մաջառները, ինչպէս տնտեսապէս աւելի բարձր կանգնած ազգ, կազմում են մինչև այժմ նոյնպէս և հունգարական պրօլետարիատի ամենազիտակից և կուի ընդունակ մասը: Մակայն երկրի ոչ-մաջառ ազգերի համար, Նրանց ազգային կոիւը հետզհետէ շփոթւած է բուրժուազիայի դէմ մզւող դասակարգային կուի հետ, մի բան, որ նորից խորացնում է ազգային հակասութիւնները և սուր կերպարանք տալիս ազգային պայքարին:

### Դ Ո Ւ Ա Լ Ի Զ Մ :

Այժմ խրօնիքական դարձած և աւելի ևս բարդացող Աւստրիայի ազգային ճգնաժամկին պիտի միաց-

նել նրա դուալիզմի սուր ճգնաժամը, որի շնորհիւ նրա ներքին դրութեան խառնաշփոթութիւնը աւելի ևս խճանում է:

Այս ժամանակակից ի վեր, երբ Աւստրիական կառավարութիւնը 1866-ի կատաստրօֆայից յետոյ անձնատուր եղաւ Հունգարացիներին և ճանաչեց նըրանց կատարեալ ինքնուրոյնութիւնը բոլոր ներքին գործերում, այնպէս որ միայն ընդհանուր զօրքը և ընդհանուր արտաքին քաղաքականութիւնն էր նրանց միացնում Աւստրիայի միացեալ մասի հետ, Հունգարացիք միշտ աւելի ուժեղ են հանդիսացել պետութեան արևմտեան մասի վերաբերեալ:

Այդ բացատրուում է նրանով, որ նրանք աւելի քիչ են ջլատւել ազգային պառակտումներով: Արևմտեան Աւստրիան բաղկացած է գլխաւորապէս հին ազգերից, որոնք, առաջ քան Հարսբուրգիան պետութեան հետ միանալը, ունեցել են հարուստ ազգային կեանք: Ի բաց առած գերմանացիներին, իտալացիքը լեհերը, չեխերը աւստրիացիներ դարձան շնորհիւ հըպատակեցման կամ իրենց ազգերի բաժան-բաժանման: Նրանց բոլոր ազգային տրադիցիաները հակասութեան հանդիպեցին Աւստրիայի ու այնտեղի գերիշխող ազգի—գերմանացինների հետ: Նրանց ազգային կեանքը պէտք էր իսկոյն և իթ ծաղկէր, հէնց որ զարգանարկադիտական հասարակութիւնը: Եւ դա առաջացաւ աւելի շուտ այդ ազգերի բան Հունգարիայի նւաճած ազգերի մէջ:

Այդ վերջինները ներկայացնում են տնտեսապէս յետամաց, երկրագործական ժողովուրդ, առանց մի որևէ պատմութեան, ինչպէս, օրինակ, ոլովակները, կամ թէ ունեն նրանք պատմութիւն, ինչպէս օրինակ սերբերը, դա էլ առանց առանձին թշնամական տրադիցիաների գէպի մաջառները—Հունգարիայի տիրապետող ժողովուրդը: Ոչ թէ Մաջառները, այլ տաճիկները

խորտակեցին նրանց ժողովրդական ոյժը, հէնց այն տաճիկները, որոնց դէմ անցած պատերազմներում կուռում էին մաջառները: Միայն դանդաղ՝ և թոյլ կերպով էր զարգանում ազգային կեանքը Հունգարիայի ոչմաջառ ցեղերի մէջ, այդ պատճառով էլ մաջառները մինչև այժմ կարողացան իրենց ցանկացածի պէս տիրապետել և կառավարել:

Բայց մաջառները հանդիսացան ոչ միայն ոյժեղ դէպի ստորինները, այլ և յամառ բարձրերի վերաբերեալ: Տիրապետող դասակարգը Աւստրիայում հանդիսանում է բուրժուազիան, միջին քայլայւող խաւերի տրադիցիաներով խիստ ամրապնդւած և պրօլետարիատի առաջխաղացութիւնից սոսկող բուրժուազիան, որը շնորհիւ ազգային հակասութիւնների, աւելի ևս վախկոտ ու կաշառակերէ, քան Գերմանիայի բուրժուազիան: Փոխանակ համախմբւելու պալատի և ազնաւականութեան դէմ, նրա մէջ թագաւորում է ազգային պառակտում. իւրաքանչիւր ազգութեան բուրժուազիա, բարձրի ողորմած ժպիտի համար, աշխատում է գերազանցել միւսներին ստրկական ստորաբարշութիւնների մէջ:

Հունգարիայում, ընդհակառակը, քաղաքական նշանաւոր դասակարգը ներկայացնում է մասր ազնւականութիւնը, իւնկերականութիւնը, անյողզողդ և ինքնապաշտանութեան ընդունակ դասակարգը, միակը ինչպէս և Պրուսիայում, պրօլետարիատից յետոյ, ընդունակ այժմ և եթ յայտնել մարդկային հպարտութիւնը արքայական գահի առաջ: Եւ Հունգարիայում նրա ընդիմադրութիւնն էլ աւելի դժւար է խորտակել, քանի որ նա իր վերաբերեալ վտանգ չի գգում մեծաքանակ և ոյժեղ պրօլետարիատի կողմից:

Ի հարկէ, քաղաքային բուրժուազիան և պաշտօնավարները, որոնք ժողովրում ենմեծ մասամբ այդ դասակարգից, ինչպէս և հրեականութիւնից, որոնք պահպա-

նել են արևելեան տնտեսութեան բոլոր յատկանիշը, կաշառակերութեան մէջ այնքան են առաջ գնացել, որ ոչինչ այլն չի մնում ցանկալ: Դա պատահական երեւոյթ չէ, այլ կատարելապէս օրինական:

Մանր արդիւնագործութիւնը, գոնէ, ամենուրէք, ուր նա գեռ ևս չի քայլայւել, ձգտում է ազնւութեան և պարտականութիւնների բարեխիզմ իրագործման. բուրժուազիան և պետական վարչութիւնը ազատ է կաշառակերութիւնից ամենից շուտ այնտեղ, ուր նըրանը առաջ են եկել խիստ զարգացած միջին խաւից:

Ընդհակառակը, հողագործը հեցտութեաւր է կորցնում ամենայն բարոյական կայունութիւն, որքան շուտ է տեղափոխում քաղաք. այդ նշանակութիւն ունի թէ գիւղացիութեան համար և թէ աւելի պահանջկոտ խոշոր հողագործի, արիստօկրատի համար, որը հէնց սկզբից պետութեան վրայ նայում է, ինչպէս շահագործութեան աղբիւրի վրայ, որին պէտք չէ կառավարել, այլ ուղղակի կողոպտել: Ուր բուրժուազիան և պաշտօնավարները ժողովում են ոչ թէ զարգացած, ուժեղ արհեստի վրայ յենուզ, միջին խաւերից, այլ հողագործների և նրանց սերունդների քայլայած, անդասակարգ խաւերից, այնտեղ քաղաքներում և պետական վարչութիւններում թագաւորում է ամենախայտառակ կաշառակերութիւնը, ինչ սուր կերպով հակասում է ազգի գիւղական ժողովուրդի ասպետութեան և ազնութեան հետ: Այդ մենք կարող ենք նշանակել Ռուսաստանից և Տաճկաստանից սկսած մինչև Բօէրները: Այդ ենք մենք ուսնում և Հունգարիայում:

Բայց որչափ էլ թէկուզ կաշառակեր լինեն բուրժուազիայի մեծամասնութիւնը, քաղաքական գործիչները և պետական վարչութիւնը Հունգարիայում, միքան, թւում է, մաճառների համար անկաշառելի է —

դա նրա շօվինիզմն է։ Նա աւելի է ուժեղ, քան կաշառակերութիւնը։

Այդպիսով, Հունգարացիները իրենց արքայի վերաբերեալ արի ու գոռող են։

Ծնորհիւ դրա, նրանք դուալիզմի միջոցով միշտ գերիշել են Աւստրիայի վրայ և շահագործել նրան աւելի մեծ չափով, քան պրուսսական իւնկերները Գերմանիան։

Մինչև այժմ Հունգարիայի հասարակական պահանջները վերաբերել են Աւստրիայի հասարակական պահանջներին, ինչպէս 300/0-ը 700/-ին։ Այն ինչ Հունգարիայի ազգաբնակութիւնը վերաբերում է Աւստրիայի ազգաբնակութեանը, ինչպէս 420/0-ը 580/-ի, և միենոյն յարաբերութեան մէջ բաժանում են և բնկութեանը, որոնք բանակ են ուղարկուում պետութեան երկու մասերի կողմից։ Պատերազմական բեռը կարելի է ասել, հանդիսանում է միակ ընդհանուր ծախսը։ Պետական բիւզինում 1902-ին 358 միլ. կոսնից (130 միլ. բուրլի) 344 միլ. 4 կոսն (125 միլ. բուրլի) ծախսում էր զօրքի և նաւատօրմի վրայ։ Դրա մի մասը, համարեա մի երրորդ մասը, ծածկուում է մաքսային եկամուտով, իսկ մնացեալը՝ պետութեան երկու կողմերի հատուցումներով։ Հունգարիան վերջին տարում պէտք էր վճարէր միջին հաշով 4 կոսն իւրաքանչիւր մարդուց, իսկ Աւստրիան—6 կոսն։

Այդպիսով, ի շնորհիւ դուալիզմի, ժամանակակից պետութեան ամենածանր բեռը—միլիտարիզմը սաստիկ թեթեանում է Հունգարիայի համար։

Միաժամանակ և միապետութեան ամբողջ արտաքին բաղաքականութիւնը, այսինքն առևտրական քաղաքականութիւնը, ծառայում է նրա շահերին։ Պետութեան արևմտեան մասի ինդուստրիան խիստ պա-

հանջ ունի մի այնպիսի քաղաքականութեան մէջ, որը բարեկամական լինէր Բալկանեան պետութիւններին որովհետք նրա արտադրութիւնների մօտակայ և լաւագոյն շուկան այդ պետութիւններն են, սակայն նըրանք արտահանում են գիւղատնս եսական մթերքներ և, ինչպէս այդպիսիներ, մրցակից են հանդիսանում Հունգարիային։ Այստեղից—սահմանափակութիւն Բալկանեան պետութիւնների վերաբերեալ, մի բան որ վասուժ է Աւստրիայի ինդուստրիային, այն ինչ հունգարական պարարիէրների շահը մեծացնում։

Այդպիսով ամենամեծ օգուտը զուալիզմից ստանում էր Հունգարիան, իսկ պետութեան արևմտեան մասը միայն վասներ էր տեսնում։ Թւում է թէ, պետք էր ենթադրել, որ հէնց արևմտեան Աւստրիան առաջինը կը լինի, որ ամենավճռական կերպով կը ձգտէ գուալիզմի ոչչացման և պետութեան երկու կողմերի կատարեալ ինքնուրոյնութեան, այն ժամանակ երբ Հունգարիայից ընդհակառակը պէտք էր սպասել։ Սակայն փաստօրէն մենք տեսնում ենք բոլորովին հակառակը։ Ի՞նչով այդ բացատրել։

Որպէս զի այդ հասկանալ, պէտք է ի նկատի առնել երեք ֆակտօրներ՝ դինաստիայի պահանջները, հունգարական ինդուստրիայի պահունջները և Հունգարիայի ոչ-ժամանակա պակերի արթնացումը։

Մենք տեսանք, որ նրանց զգացումը և ազգային ընդհանուր կապը մինչև այժմ, շնորհիւ տնտեսական յիշամանացութեան և ազգային տրագիցիաների ոչ բաւարար զարգացման, շատ յետ է մնացել պետութեան արևմտեան մասի նժամօրինակ երեւոյթներից։ Բայց նրանք աճում են և աւելի ու աւելի վտանգաւոր դառնում մաջառական հեգեմոնիայի համար։ Վերջին խանակութիւնները Կրօացում ակնայայտնի կերպով ցոյց տիին, թէ որքան ուժեղ է մի-

քանի տեղերում ազգային թշնամութիւնը մաջառների դէմ: Սակայն այդ հետզհետէ միծացող զգացմունքը միշտ հայեացքների մէջ չէ արտայայտում դէպի սահմանը: Հունգարիայի ոչ-մաջառ ազգերին աւելի մօտ և աւելի շատ հնարաւոր է թւում խորտակել մաջառների գերիշանութիւնը դուալիզմի ոչնչացման և պետութեան երկու մասերի նոր միացման միջոցով՝ մի միացեալ պետութեան մարմին մէջ: Յաղթահարներութիզը, ամբողջ Աւստրիան ֆեռերատիւ հիմունքներով կազմակերպելով—այսպէս է նրանց նպատակը, որը նրանք միշտ բացարձակ չեն արտայայտում, բայց որին նրանք փաստորէն ձգտում են:

Մակայն նրանք այս բանին աւելի մեծ դժուարութեամբ են հասնում, որքան աւելի ինքնուրոյն է Հունգարիան, որքան աւելի անսահման կերպով են տիրում մաջառները պետութեան բոլոր ոյժերի վրայ, որքան աւելի նրանք հնարաւորութիւն ունեն զէնքի ոյժով ընդդիմագրել իւրաքանչիւր փորձի, որոնք կը գան նրանց ամրացնելու պետութեան հետ, որտեղ նըրանք փոքրամտանութիւն են կազմում: Դրան խիստ կերպով նպաստում է ինքնուրոյն հունգարական զօրք ունենալու ձգտումը, թէպես այդ զօրքի ծախսերը Հունգարիան մենակ պէտք էր հոգար, մինչդեռ այժմեայ հունգարական գունդերի պահպանման համար, միապետութեան արևմտեան մասը հատուցանում է ծախսերի մեծագոյն մասը:

Այդ նոյն ուղղութեամբ ազգեցութիւն ունի և հունգարական խոշոր արդիւնաբերութեան առաջացման ձգտումը: Իւրաքանչիւր ազդ կամենում է ունենալ իր սեփական կապիտալիստական ինդուստրիան, որովհետեւ վերջնիս բացակայութիւնը նրանց տնտեսական կախման մէջ է դնում կապիտալիստականօրէն զարգացած ազգերից: Բայց տիրապետող դասակարգերը սակաւ են փորձում կուլտուրական աշխատանքի

միջոցով առաջացնել զարգացած խոշոր արդիւնաբերութեան նախապայմանները, բոլորից առաջ պրօիետարիատի մտաւոր աստիճանի բարձրացման և ժողովրդական մասսաների բարեկեցութեան բարձրացման միջոցով, որը և կընդարձակի ներքին շուկան: Կապիտալիզմի սկիզբը, միծ մասամբ, ամենուրէք, նոյնպէս և Հունգարիայում, սկսում է զիւղական ազգաբնակութեան չքաւորութեամբ և նրանից հաւաքրող պրօւտարիատի յաջորդական անկմամբ: Սակայն այդ տեսակ պայմաններում խոշոր արդիւնաբերութիւնը չի կարող այնպէս զարգանալ որպէս զի կարողանայ մըրցել արտասահմանի հետ: Այդ պատճառով պաշտպանողական մաքսերը ամենուրէք տիրապետող գառակարգերին թւում են ամենափորձած և, ամենայն դէպըս, ամենայարժար միջոցը՝ նպաստել արդիւնաբերութեան, քան բարձրագոյն կուլտուրայի տարածումը: Այսպէս, հունգարացիք էլ մտածում են սեփական մաքային սահմանների մասին, չը նայած այն բանի վրայ, որ դուալիզմը ամբողջ մօնարքիայի արտաքին բաղաքականութիւնը ամբողջապէս ծառայեցնում է նրանց շահերին:

Հունգարացիները, ձգտելով ըստ կարելոյն լայն ինքնուրոյնութեան ամբողջ մօնարքիայի վերաբերեալ, պէտք է դինաստիայի շահերի դէմ կանգնէին:

Հրամայողի ոյժը, հաւասար պայմանների ժամանակ ընդհանրապէս, աւելի մեծ է, որքան աւելի է միացած և կենտրոնացած պետական իշխանութիւնը, որով նա կառավարում է: Ֆրանց Յովաչի դուալիզմի հետ համաձայնւեց միայն կեօնիգրեցի կատաստրօֆայից յետոյ և միայն այն պայմանով, որ գէթ զօրքը և մաքսային սահմանները մնում են ընդհանուրը: Եթէ այդ ընդհանրութիւնը վերանայ և առաջ գայ լոկ անձնական միութիւնը (ունիան) պետութեան երկու մասերի մէջ, այն ժամանակ դինաստիայի ոյժը կը

փոքրանայ, և բացի այդ մի մեծ պետութեան հրամայողից նա դառնում է երկու փոքր պետութիւնների հրամայող, և իրա դինաստիայի գոյութիւնը միշտ վտանգի է ենթարկելու այդ երկու կողմերից մէկում, որքան շուտ բանկէի կօնֆլիկտ նրանց մէջ: Եւս առաւել իւրաքանչիւր հակասութեան ժամանակ պետութեան մասերի մէջ, միապետը հարկադրւած է լինելու կանգնել աւելի ազրեսսիւ և ուժեղ մասի կողմը, նա աւելի ևս կը դառնայ Հունգարիայի գերին, քան այժմ, եթէ չի կամենում ենթարկւել աւելի վատթարդրութեան, ինչ կարող է պատահել Հունգարիայում, այսինքն դառնալ արտասահմանեան տէրութիւնների ագենտը:

Դինաստիայի և մաշառների շահերի հակասութիւնները սպառնում են աւելի ու աւելի սրանալ, որքան աւելի ոչ-մաճառ ազգերը Հունգարիայում կազդուրում և ընդունակ են դառնում ծառայել թագին, իբրև դաշնակիցներ մաշառական ապատամբութեան դէմ: Այդ հակասութիւնը պէտք է սրւի նոյնպէս անձնական հիմունքներից, որքան շուտ կտուավարող պետի տեղը կը գրաւի նրա ժամանգը: Ֆրանց Յովանց գլուխի ծերէ, կորացած պետական և անձնական ճակատագրի անողորմ հարւածներից: Նա այլև չի սիրում սուր կօնֆլիկտներ և ժողովրդականացած է հունգարացիների մօտ, որոնց 1866-ից յետոյ մի շարք նշանաւոր զիջումներ արեց, կատարելապէս նրանց պահանջներին բաւարարութիւն տւող մինչև երեք տասնամեակ: Իսկ ժառանգը տաքարիւն մարդ լինելով, կատաղած ընդիմագրում է ամեն մի փորձին սահմանափակել իր ոյժը: Հունգարացիները նրանից սոսկալի կոփւ են սպասում իրենց լայն ինքնուրոյնութեան ձգտումների դէմ և նոյնիսկ սպասում են, որ նա եռանդուն կերպով աջակցելու է այն ձգտումներին, որոնք ուղղւած են դէպի դուալիզմի ոչնչացումը, ոչ թէ անձնական ունիա-

յի հաստատումով, այլ միացեալ, թէպես և փեղերակազմակերպւած, Աւստրիայի վերականգնեցման միջնցով, որի մէջ մաշառները ունենային ոչ աւել նշանակութիւն, քան, օրինակ, չեխերը, կամ լեհերը:

Այդ հեռանկարը արդէն-իսկ լարում է այժմեաց դրութիւնը: Ոչ միայն ոչ-մաժառ ազգութիւնների ամրապնդող ազգային զգացմունքը, այլ նոյնիսկ սպասող փոփոխութիւնը միապետի անձնաւորութեան մէջ, ցոյց է տալիս մաշառներին, որ թերևս տասը տարուց յետոյ նրանց գիրքը շատ քիչ նպաստաւոր լինի, քան այսօր, եթէ նրանք այժմ-իսկ չը հասնեն նշանաւոր զիջումների նոր ինքնուրոյնութեան վերաբերեալ: Ինչ նրանց այժմ չի յաջողւի խլել հին կառավարութիւնից, այն նրանք չեն ստանայ նորից:

Մաշառների և պետութեան վարմունքը այդ կօնֆլիկտում հեշտ հասկանալի է: Աւելի քիչ հասկանալի է գերմանական քաղաքագետների մեծամասնութեան վարմունքը արեկմտեան Աւստրիայում, որոնք օգտառում են ընտրողական իրաւունքի արտօնութեամբ:

Պէտք էր ենթազրել, որ նրանք ուրախութեամբ կը ողջունէին Հունգարիայի անջատումը Աւստրիայից, ինչպէս մի փրկարար միջոց ծանր բեռի տակից դուրս գալու համար: Զէ՞ որ հէնց գերմանացիքն են, չեխերի հետ հաւասար, ամենաշատը տուժում դռւալիզմից: Առաջինը այն պատճառով, որ նրանք, ինչպէս ամենազարգացած տարրը արդիւնաբերութեան մէջ, ընակւում են այն տեղերում, որոնք ամենից շատ են վնասում Հունգարիայի ազրարական առևտորական քաղաքականութիւնից, իսկ յետոյ նոյնպէս այն պատճառով, որ նրանք են վճարում հարկերի մեծագոյն մասը, որով պահւում է ընդհանուր զօրքը:

1899-ին իւրաքանչիւր մարդի վրայ գալիս էր

Տէրունական հողեր	Ուղղակի հարկեր	Կողմակի հարկեր, օկտօի	Գողմակի հարկեր ծննդավաճառ ուղղակի բերեալ	Գողմակի
Կոօն	Կոօն	Կոօն		
Ներք. Աւստրիա	31,65	17,12	18,27	67,04
Վերին Աւստրիա	11,65	6,39	8,62	26,86
Զալցբուրգ . .	11,79	10,31	10,97	33,07
Շտիրիա . .	10,48	5,55	8,04	24,07
Բոգեմիա . .	10,68	17,30	9,17	37,25
Մորավիա . .	10,14	21,81	6,88	38,83
Սիլեզիա . .	9,17	27,00	11,06	47,23
Գալիցիա . .	3,53	5,12	3,69	12,34
Բուկովինա . .	3,95	4,61	4,00	12,56
Դալմացիա . .	2,69	0,90	2,45	6,04
Ամբողջ արև-				
մլտեան մասում	10,52	11,48	8,05	30,05

Այժմ եթէ այդ ծանրութեան անհաւասար բաժանումը այդքան վատ չը լինէր, եթէ նա առաջ տանէր հարստութեան հաւասարեցում, եթէ աւելի խոշոր հարկերը արդիւնաբերական շրջաններից գործադրւէին երկրագործական բայցօնների կուլտուրական բարձրացման, ուսումնաբանների, հաղորդակցութեան ճանապարհների լաւացման, մելիօրացիաների համար և այլն — այն ժամանակ դա քաղաքականութիւն կը լինէր, որը ոչ միայն պրոլետարիատի ազգային համերաշխութեան տեսակէտից, այլ նոյնակէս և քաղաքական, բուրժուական առևտրական տեսակէտից հատուցւած կը լինէր,

\*.) Ծխախոտի մենագաճառութիւնը պետութեան արևմտեան մասին 1899-ին հատկացրեց 133 միլ. կոօն զուտ օգուտ, մինչեւ ծխախոտը 76 միլ. կոօն էր: Այդպիսով ծխախոտի մասը  $\frac{2}{3}$  մասը ծխախոտի մենագաճառութեան վերաբերեալ կազմում է հարկ:

որովհետեւ նա կը նդարձակէր ներքին շուկան յետամնաց տեղերի կուլտուրական բարձրացման միջոցով:

Սակայն այլ է գործի դրութիւնը, երբ ունեուր տեղերի բոլոր եկամուտը ծառայում է միայն միլիտարիզմ մօլոքին: Այդ տեղերը ուժանպաւում են, նրանց արդիւնաբերական աճեցումը կանգ է առնում, առանց չնչին օպտի յետամնաց տեղերի համար, որոնք ոյնպէս բամեած են, այնպէս որ տնտեսապէս նրանք աւելի են բայցայում, քան արդիւնաբերական վայրերը:

1899-ին Ցիսլեյտանիայի (Արևմտեան Աւստրիայի) պետական ծախսերի ընդհանուր գումարից 60.225,000 կոօն տրում էր կուլտի և կրթութեան մինիստրութեան, 4'.005,000 կոօն երկրագործութեան մինիստրութեան: Այս ինչ ընդհանուր գործի (զօրքի) համար 250.505,000 կոօն է յատկացյում, և դրանից բացի պետական պաշտպանութեան մինիստրութեան 49.041,000 կոօն, ընդամենը, այդպիսով 300 միլիոն կոօն: Պետական պարտքի տոկոսների վճարման համար 330.842,000 կոօն:

Աւստրիայի գերմանացիները ամենին շահագըրգուած չեն այժմեայ դրութեան յետազայ պահպանման մէջ, որը զգալի կերպով ծանրացնում է ամենուրէք արդէն ճնշող միլմտարիզմի բեռը: Չեխերի նման, նրանք ամենաշատ առիթները ունեն պահանջելու Հունգարիայի անջատումը:

Բայց ինչպէս և միշտ, նոյնակէս և այս անգամ, Աւստրիայի գերմանացիները — այսինքը նրանց քաղաքական, արտօնեալ գասակարգերը, — կուրացած են անբուժելի ուրութեամբ, ինչոր ամենաչնչին անհեռատես շարժառիթներից նրանք ընդդիմանում են այն զարգացման, որը հարկագրիչ կերպով պահանջում է նրանց սեփական շահը, երբ նայենք դրա վրայ փորը ինչ լայն տեսակէտից:

Ճնորհիւ այժմեան ընտրողական իրաւունքին,

որը ունեոր դասակարգերի արտօնութիւնն է ներկայաց-  
նում, կռիւը լեզւի համար և ընդհանրապես ազգու-  
թիւնների կոիւը Աւստրիայի ներկայացչական հեմմար-  
կութիւններում երեան է գալիս ոչ թէ իրը ազգերի,  
այլ միայն նրանց բարձր խաւերի կոիւ։ Բայց շնորհիւ  
արդիւնաբերական յետամիացութեան և նրա խանգար-  
ման, այդ դասակարգերի նոր սերունդի համար առաջ-  
խաղացութեան քիչ գէպքեր են ներկայանում արդիւնա-  
բերութեան ասպարէզում։ Պետական և հասարակական  
ծառայութիւնը այնտեղ աւելի մեծ նշանակութիւն է  
ատանում, քան, օրինակ, Անգլիայում, կամ Գեր-  
մանիայում։ Նա գլխաւոր ապաստարանն է դառնում  
բուրժուական ինտելիգենցիայի, նոյնպէս և գիւղական  
սերունդների համար, և նրա նշանակութիւնը նրանց  
համար աճում է այն չափով, որքան քայլայւում են  
գիւղացիութիւնը և միջին խուերը, ինչպես այդ նկատւում  
է Աւստրիայում, չնայած կապիտալիստական զարգաց-  
ման կանգման, եթէ ըստ կապիտալիստական արդիւ-  
նագործութեան օրէնքի, այնտեղ, ուր առաջանում է  
խոշոր արդիւնաբերութիւնը քայլայւում է մասնը,  
այդ գեռ չի նշանակում թէ ներկայումս ծաղկում է  
մանր արդիւնագործութիւնը այնտեղ, ուր գեռ չի  
հաստատւել խոշորը։ Խոշոր արդիւնագործութիւնը չի  
կարող գոյութիւն ունենալ այնտեղ, ուր պայման-  
ները չեն թոյլատրում ոչ մի շահաւէտ արդիւնագոր-  
ծութիւն։ Սակայն այնտեղ կործանում է նոյնպէս և  
մանր արդիւնագործութիւնը։ Այս համելի տնտեսական  
գրութեան մէջ է գտնում Աւստրիան։

Պետութեան, երկրի, համայնքի մէջ տեղ չի բա-  
ւականանում այն բոլոր բազմաթիւ խնդրողների հա-  
մար, որոնց այդ գրութեան մէջ է գրել տնտեսական  
կանգումը, և այդ պատճառով սոսկալի կոիւ է սկսում  
առանձին ազգերի մէջ պաշտօնների համար, այսինքը  
ուսուցիչների, դատաւորների, վարչութեան պաշտօնա-

վարչների, սպաների տեղերի համար։ Գերմանացիները,  
կամ աւելի ճիշտ ասած, գերմաներէն խօսողները, ա-  
ռաջ այդ տեղերը մենավաճառել էին. իսկ այժմ, գեր-  
մանական վայրերից դուրս նրանք քշուում են համայնա-  
կան և գաւառական պաշտօններից, և նոյն իսկ պետա-  
կան ցած պաշտօնատեղերից։ Դրա համար էլ նրանց  
աւելի յամառութեամբ են պնդում գերմանական լեզուի  
անհրաժեշտութիւնը զօրքի մէջ։ Գոյնէ զօրքի մէջ պէտք  
է գերազասութիւն լինի գերմանացի սպայի համար,  
միայն գերմաններէն խօսել իմացողը պէտք է մուտք  
ունենայ զօրքի մէջ։

Բացի այն գիտաւորութիւնից, որպէս զի սպա-  
յական տեղերը վերապահն գերմանական երիտա-  
սարդներին, որոնց նրանց ծնողները չը գիտեն ուր և  
ինչ գործի դնել, գերմանական քաղաքագետները ի-  
րենց գործունէութեան մէջ զեկավարում են և «բէալ  
քաղաքական» բնաւորութեան նկատումներով։ Նրանք  
ցանկանում են իրենց ստորաքարշութիւններով գերա-  
զանցել միւս ազգերին, ապացուցանել թագին, որ մի-  
միայն գերմանացիների յօտ է նրա իրաւունքը անբրո-  
նադատ պաշտպանում, որ միայն գերմանացիներն  
են վստահելի լաքէյներ, և որ այդ պատճառով թագը  
ունի բոլոր հիմունքները ստուցանել և հոգալ գերմա-  
նական տարրի մասին։

Նրանք ոչ մի բան չի սովորեցին և ոչինչ չի մո-  
ռացան։ Փաստօրէն ոչ մի տեղ աղերսելու քաղաքա-  
կանութիւնը, ստորաքարշութիւնների միջոցով, չը վեր-  
ջացաւ այդ տեսակ սնանկութեամբ, ինչպէս Աւստ-  
րիայում։ Ոչ թէ ամենալոյալ, այլ ապստամբուով ազգը  
շատ զիջումներ ստացաւ սկսած 48 թւից, այն ազգը,  
որ յայտարարեց այն ժամանակ, որ Հարաբուրգեան  
դինաստիան գաղաքել է թագաւորելուց, այն ազգը  
որը, դրա մէջ հաւատացած ենք, կարող կը լինի կրկ-  
նել այդ ազգը, եթէ միայն այդ պահանջեն նրա շահե-

ըր, Ընդհակառակը, այն էլեմենտները, որոնց լոյալութեան վրայ թագը կարող էր անպայման յուսաւ, միշտ քիչ էին շահում, ինչպէս Աւստրիայում նոյնպէս և ամենուրեք:

Բոլորովին այլ դրութեան մէջ է գտնուում միշտպային սօցիալ-դեմօկրատիան Աւստրիայում: Արդէն վաղուց է, որ նա պարզ և վճռական ծրագիր ունի, թէ ընդհանրապէս ազգային հարցերի վերաբերեաւ, և թէ առանձնապէս գուալիզմի հարցի մասին: Առաջին հարցի համար ծրագրում նշանակւած է՝ ազգերի աւտոնոմիա: Երկրորդի համար՝ պետութեան երկու մասերի անջատումը միմեանցից, ոչնչացումն այժմեաց երկուական դրութեան, որը ճնշում է երկու մասերին կամ ծառայում է միայն սօցիալական ընդհարումների մեծացման, որոնց միջոցով արհեստականորէն էլ ինքարդանում և սրւում առանց այն էլ բարդ ազգային հակասութիւնները:

Սօցիալ-դեմօկրատական ծրագիրը միակն է հանդիսանում, որը գալիս է լուծելու աւստրիական ազգութիւնների վերաբերեալ սլրօրիկմը: Բայց որովհետեւ նա առաջադրուած է միայն սօցիալ-դեմօկրատիայի կողմից, ուստի ոչ մի յոյս չը կայ նրա իրագործման մէջ աւելի վաղ, քան նա կը տիրանայ քաղաքական զեկին Աւստրիայում: Դա կը նշանակէր Աւստրիայի լուծուուր, ինչպէս կենտրոնացած մեծ պետութեան ընդհանուր գործով և բիւրօկրատիայով հանդերձ և նրա վերածումը մի պետութեան, նման Զւիցերիայի, ազգերի դաշնակցութեան, որոնց մէջ իշխում է մասը կանտոնների, կամ շրջանների ու համայնքների ամենալայն ինքնավարութիւնը:

Բայց ով շահ կունինար այն բանում, որպէս զի Աւստրիային նոր կեանքի վերագարձնել, երբ նա մեռնել է: Աւստրիայի գոյութիւնը ներկայումս միայն խանաշփոթութեան արդիւնք է, և ոչ թէ ներքին անհրաժեշտութեան. որչափ Աւստրիան գոյութիւն ու-

նի, նրա բնակիչները, ինչպէս և սօցիալ-դեմօկրատները, պէտք է աշխատեն նրան կենսունակ դարձնել, որովհետև իրենք էլ պէտք է նրա մէջ ապրեն: Իսկ եթէ հին Աւստրիան կործանւի կատաստրօֆից լամ մարագմից, այն ժամանակ նրա էլեմենտները կ'ազատւեն և միասին ապրելու մտքից հեռու եղողները, ըստ հնարաւորութեան, կը բաժաննեմ միմեանցից. այդ տեսակ միմեանցից բաժանւող մասեր են ներկայացնում հին պատմական ազգերը—գերմանացիք, լեհացիք, իտալացիք: Կը միանան արդեօք մնացեաները—բուսին ները, ըումինները և սերբերը, հարեան ազգային—աւրենակից պետութիւններին, թէ կը փորձեն, ինչպէս, օրինակ, չիսկերը, մաջանները, սեփական պետութիւն ստեղծել, թէ գուցէ կը նախազամեն նոր Աւստրիա հիմնել, ազգերի ինքնավարութեան հիմքերի վրայ, այս բոլորը նկարագրել այստեղ աւելորդ կը լինի, որովհետև անհնարին է մի որևէ է բան նախատեսնել: Յամենայն գէպս դա մի շատ հասարակ և շաղաղ պրօցես չի լինելու, պրօցես որի միջոցով Եւրոպայի հարաւ արելեան ժողովուրդների քաօոը կը հասնի իր վերջնական ազգային միաւորման—կօնուլիդացիային:

Բայց ինչ որ էլ չը լինի, յամենայն գէպս, Աւստրիայի ազգութիւնների սլրօրիկմի վճռական լուծումը, կամ միայն գուալիզմի ճնշամամի լուծնումը անկարելի է թւում, քանի գոյութիւն ունի ներկայ բեժիմը: Ոչինչ չի կարելի առաջարիել իբրև ժամանակաւոր միջոց, ազգային խոշոր հարցերից և ոչ մէկը չի կարելի առանց այլնայլութեան վերացնել: Ընդհակառակը, ինչպէս սօցիալական հակասութիւնները, նոյնպէս և ազգային, պէտք է աւելի ու աւելի սրւեն:


Սակայն այստեղ էլ բուրժուական աշխարհը անընդունակ է հանդիսանում եղբակացութիւններ անել սեփական գոյութիւնից: Նրա ինդիրներին է վե-

բաբերում իրաւաբանական հաւասարութեան և բա-  
ղաքական ազատութեան հաստատումը, ինչպէս և ազ-  
գերի դասաւորումը և միաւորումը ազգային պետու-  
թեան մէջ: Բայց, ինչպէս պատմական խոշոր պրօբ-  
լեմները, որոնք հասարակական հակասութիւնների  
լարւածութիւնից են բղխում, նոյնպէս և այդ—ժամա-  
նակակից խոշոր պետութեան մէջ կարող է լուծել  
միայն կատաստրօֆների միջոցով, որոնք վերացնում  
են բոլոր խոչնդուները նոր կազմակերպութների հա-  
մար: Ազգային պետութիւնները պատերազմների և յե-  
ղափոխութիւնների միջոցով են կազմակերպւել: Ներ-  
կայումն բուրժուական հասարակութիւնը այնքան փը-  
տել է, որ նա չի կարող դիմանալ ոչ մի քաղաքական  
ցնցման: Նա սոսկում է իրաքանչիւր այդ տեսակ կա-  
տաստրօֆի առաջ և գործ է դնում իւր ամբողջ ճար-  
պիկութիւնը, որպէս զի յետաձգել ամեն մի լուծում  
որքան էլ նա կենսունակ լինի, եթէ վերջինը կարող  
է իրագործւել միայն կատաստրօֆի միջոցով կամ ոյ-  
ժերի ընդհարման փորձով, իր կամը հաստատելու  
համար:

Մենք ոչ մի կարիք չունենք ցանկանալու, որպէս  
զի, զարգացումը այդ ուղիով գնայ, որովհետև դրանով  
չափազմնց բարձրանում են այն պահանջները, որոնց  
նա զնում է մեր առաջ: Սակայն այդ ցանկութիւնը չը  
պէտք է մթնեցնի մեր զիտակցութիւնը, թէ այդ ուղին  
խսկապէս զարգացման ուղին է, որին մենք պէտք է  
յարմարենք, որպէս զի խուսափենք ամեն մի պա-  
տահականութիւնից:

Ոչինչ աւելի ցանկանալի Աւոտրիայի սօցիալ-գե-  
մոկրատիայի համար չէր կարող լինի, քան ազգութիւն-  
ների հարցի վերջնական լուծումը հէնց այժմեայ պե-  
տութեան մէջ: Նրա ազգեցութիւնը դրանով անվերջ  
կը հեշտանաբ: Առաջ, ես սպասում էի, որ դասա-  
կարգային կուի աճեցումը կը մօտեցնի զանազան

ազգերի բուրժուազիային, բայց մինչև այժմ բոլորովին ընդհակառակն է կատարւել: Ընդհանուր առմամբ, մենք պէտք է նկատենք, որ բուրժուական աշխարհը աւելի ու աւելի բաժանում է: Ճիշտ է սօցիալ-գեմոկրատի-այի խոշոր յաղթութիւնները կարող են ժամանակաւո-րապէս կանգնեցնել այդ բաժանումները և կենտրոնաց-նել մեր հակառակորդներին մի բեակցիօն բանակի շուրջը, բայց չե՞ որ նրանց միութիւնը չի կարող երդ կար տեւել, նոյնիսկ և այն դէպքում, եթէ նկատեն, որ մօտենում է իրենց վերջին ժամը: Այդպիսով մինչեւ մօտիկ ժամանակները մեր կողմակիցները Աւստրիա-յում դատապարտւած են անընդհատ կռւի աւելի ու-աւելի սոսկալի դարձող ազգային քաօսի մէջ, ոչ միայն ընդդէմ մեր թշնամիների, այլ նոյնպէս և ազգային ուժեղացող հոսանքների և յետամաց խաւերի ներքին հակասութիւնների դէմ: Դա գժւար գործ է, այն ինչ, նրանց յաջողւել է անսասան կերպով ծածանել միջազ-գային համերաշխութեան դրօշակը, չնորհիւ նրանց ծրա-գրի պարզութեան և շնորհիւ այն անվեհեր վճռակա-նութեան, որով նրանք ժխտել են իւրաքանչիւր միտքը կօմպրօմիսի մասին: Ապրագյուղ էլ նրանց նոյնպէս յաջողութիւն է սպասում:



**ՕՏԱՐ ԽՈՍՔԵՐԻ ԲԱՌԱԹԵՐԹ**

**Ա.**

ԱԳՐԱՐԻԵՐ—Խոշոր կալուածատէր, կամ այդ դաստիարգին ներկայացուցիչը պարլամենտում:

ԱԳՐԵՍԻԻ—յարձակողական, նւաճողական:

ԱՍՍԻՄԻԵՆՑԻՄ—ձուլում:

ԱԻՏՈՆՈՄԻԱ—պետական կազմի մէջ վարչուկան, օրէնսդրական ապակինութեացումն:

**Դ.**

ԴԻՆԱՄԱՏԻԱ—թագաւորական տոհմ:

ԴՈՒԱԼԻԶՄ—պետութեան քաղաքական կեանքում երկու ժողովրդների հաւասար իշխանութեան սկզբունք:

**Ե.**

ԷՎՈԼԻՒՑԻՕՆԻՍՏ—իրերի աստիճանական զարգացման ուսմունքի կողմնակից՝ բնութեան կամ հասարակութեան մէջ:

ի.

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ—խոշոր արդիւնաբերութիւն:  
ԻՆՍԱՆՑԻԱԼ—աստիճան:

Լ.

ԼՕՑԱԼ—հաւատարիմ, օրինական:

Կ.

ԿԱՆՏՈՆ—Շվեյցարական գաշնակցութեան առանձին  
փոքր պետութիւններ, անկախ ներքին  
գործերում:

ԿԱՏԱՍՏՐՈՓԱԼ—գոյութիւն ունիցող կարգերի յանկար-  
ծական կործանում:

ԿՈՄՊՐՈՄԻՍ—զիջում:

ԿՈՆՍՈԼԻԴԱՑԻՈՆ—միաւորում:

ԿՈՆՖԼԻԿՏ—ընդհարում:

ԿՈՒԼՏ—պաշտամունք:

Հ.

ՀԵՖԵՄՈՆԻԱԼ—քաղաքական գերիշխանութիւն:

Մ.

ՄԵՐԱԿՄԱՆ—կենսական ոյժերի սպառում:

ՄԻԼԻՕՐԱՑԻԱԼ—զիւղական տնտեսութեան բարելա-  
ռում:

ՄԻԼԻՑԱՐԻՑԻՄ—մշտական զօրքի ոյժեղ զարգացում  
ի վկա ժողովրդի միւս պահանջների:

Ո.

ՈՒՆԻԱԼ—սիոնթիւն:

Պ.

ՊՐԻՄԻՑԻՒՄ—նախնական, նահապետական:  
ՊՐՈՊԼԵՄ—լուծելու խնդիր:  
ՊՐՈՑԵՍ—ընթացք:

Ջ.

ՍՏԱԴԻԱԼ—զարգացման աստիճան:

Տ.

ՏԵՄՊ—արագութիւն:

ՏԵՆԴԵՆՑԻԱԼ—ձգում զէպի որոշ նպատակ:

ՏՐԱԴԻՑԻԱԼ—աւանդութիւն, աւանդական սովորու-  
թիւն:

Ռ.

ՐԱՍԱԼ—ցեղ:

ՐԵԱԼ—իրական:

ՐԵԿՐՈՒՏ—նորակոչ զինւոր:

ՐԵՎԻԶԻԾԻՆԻՑԻՄ—վերաբննագատական հոսանք: Աօցիա-  
լիզմի մէջ դա նշանակում է եղուարդ  
ԲԻՐՉԱՋԻՆԻ առաջնորդութեամբ ըսկա-  
ւած քննադատական հոսանքը մարք-  
սիզմի և Մարքս-էնգելսի հիմնադրած  
գիտական սօցիալիզմի մէջ:

Ճ.

ՅԱԿՏՈՒՐ—գործոն, ներպործող ոյժ:

ՅԵՒԵՐԱՆ.—դաշնակից:

ՅԵՒԵՐԱՏԻՒ—դաշնակցական:

ՅԵՐԵՎԱՆԱԿԱՆ—աւատական:



Լոյս տեսաւ «կ և անք»-ի Գրտղարանից

1. Վ.0704.0204.—Ընդհանուր ընտրողական իրաւունքը  
Արևմտքում, թարգմ. Կ. Միքայէլ-  
եանցի, գինը՝ 10 կ.
2. Բ. ԻՇԽԱՆԵԱՆ.—Տնտեսական զարգացման ֆազերը.  
գինը՝ 15 կ.
3. ԿԱՐԻՑԿԻ.—Աւտոբիոյի ճգնաժամը (Լեզու և ազգ).  
թարգմ. Ա. Ա. Յանելուած, օտար  
խորերի բառադիրը, գինը՝ 7 կ.
4. ԶԵՅԴԵԼ.—Նորմալ բանուրական օր, թարգ. Մ. Ե-  
սայեանի, գինը՝ 5 կ.

Թարգմանուած և տպագրութեան համար պատրաստ-  
ւում են.

1. ԿԱՐԻՑԿԻ.—Էրֆուրտի ծրագիրը:
2. Կ. ՄԱՐՔՍ և Ֆ. Էնդելը, —Կոմմունիստական Ման-  
ուֆեսուլ:
3. ԳԵԴԻ.—Կոլեկտիվիզմ:
4. ԼԻԲԻՆԵԽՏ.—Մեր նպատակները:
5. ԲԱԴԻՆ.—Պետական կազմը և քաղաքական կուսակ-  
ցութիւնները:
6. Ն. ՏԵՕՄԵԻ.—Խուզարկութիւն:
7. Ի. ՇՏԵՐՆ.—Յաւելեալ արժէրի թեօրիան:
8. ԲԵԲԵԼ.—Բրիստոնէութիւն և սօցիալիզմ:

Դիմել՝ թիֆլ. «ԿԵԱՆԻ»-ի խմբագրատունը, «ԿԵԱ-  
ՆԻ բնական», «Գուտահնուրերգ» և թառայեան գրավա-  
ճառանցներին, իսկ միւս քաղաքներում տեղական գրա-  
վաճառանցներին:

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0039518

5965

